# ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԶՈՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

## ԼՐԱՑԱՎ ԲՈՐԻՍ ՍՈՒՊՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Զրահատանկային վորքերի գեներալ-մայոր Բորիս Դավթի Սուպյանը ծնվել է 1904 թվականի հուլիսի 7-ին Բոգուչևսկ քաղաքատիպ ավանում: 1920 թվականից Պետրոգրադում աշխատել է գործարանային հաստոցավար բանվոր: Ստացել է միջնակարգ կրթություն, ապա աշխատանքին զուգընթաց սովորել մանկավարժական ինստիտուտի երեկոյան բաժնում:

Նրա որդու՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ԱՄՆ-ի և Կանադայի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, Ամերիկայի Միացյալ Նահանգների ժամանակակից տնտեսության և քաղաքականության ամենահեղինակավոր հետազոտողներից մեկի՝ Վիկտոր Բորիսի Սուպյանի հաղորդած տվյալների համաձայն հայրը իր ծառայությունը Կարմիր բանակում սկսել է 1926 թվականից: 1932 թվականին ավարտել է Ա. Գերցենի անվան մանկավարժական պետական ինստիտուտը, 1946-ին՝ Զրահատանկային վորքերի ակադեմիան:

Հայրենական մեծ պատերազմի սկզբից որպես 43-րդ տանկային դիվիզիայի շտաբի պետ Բորիս Սուպյանը մասնակցել է Բերդիչևի, Նովգորոդ-Վոլինսկի, Կորոստենի մոտ մղված պաշտպանական մարտերին:

Մերձվոլգյան ճակատամարտում նա արդեն տանկային բրիգադի հրամանատար էր: 1943-1945 թվականներին ղեկավարել է տանկային կորամիավորումներ Կուրսկի, Օրյոլի, Բելգորոդի, Խարկովի գրավման մարտերում, մասնակցել է Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի ազատագրմանը:



Հետպատերազմյան տարիներին տաղանդավոր կորահրամանատար գեներալ-մայոր Բորիս Սուպյանը ապրել է Պետերբուրգում: Հայրենիքի քաջարի պաշտպանը մահացել է 1967 թվականին:

*ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԹԵՄԱՅՈՎ*

# ՄԵԿ ՓՈՔՐ ՄԵԽԴՐԱՆՔ

*(ԹՈՓԹԻԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ)*

Յաշերում վրաները գանգատվել չուկեյի, համա... Երբ որ ասօրվան օրը մեր տարուքովներուս սիրտերը խաթի քըցավցունուն նը, որոշեցի մեկ փոքր գանգատվել: Իհարկե մեկ քանի հատին հիչ ումուռեն ալ չէ, համա մինք կենե քիչիմա ըլանը՝ պիտ գանգատվինք շտե, բեքիմը շատերուն դաս կըլա մեր ասածը:

Մինք յաշ քեներըս 4-5 տարեկան մեծիմեն մեծ ըլային նը, նացա աղա կամ ջիջա կըհեսաբեյինք և խաթի մտիկ կանեյինք շտե: Էկեր մեքատ տարուքով մաշդ՝ «իդավուկը մանի»,- աներ և կամ թե մեկ տեղըմ խրկեր՝ «գնա ինա տեղեն ինա բանը բեր» աներ նը՝ մինք անպատճառ, հիչ ժամանակ չանցունելե իդա նացա մտիկ կանեինք:

Ծինը կան յաշեր իրենցմեն մեծին ասածը բանի տեղ ալ չին դնի՝ գոյա ինքերը հիչ ծերանալու չին:

Դիրացիններով իրկունով տխախը, կաբոռին տակը գալաջիյով նստած էինք: Մենա կընայիս՝ ժեքատ մոտոցիկլետով յաշեր, էտեվէտեվի, մեմը ասքով, մեմը անքով, սիգնալ տալեն, թոկդուման հանելեն, շամաթայով խոչիյի կելլին: Մեմեծկի գալաջի հասկընալու բան չէ շամաթաներեն, չիդիմանալու բան է: Էտեվներեն կըկանչինք քանի չեշիտով, օգութ չունե, ախպար:

Աղիվոնք անցան, մեծ ալ կընայիս մեքատ ինամառկայով ռուլին դեմն ալ մեքատ յաշ պացան նստած, թելեֆոնն ալ անկաջին դրած, մեկ չեշիտըմ ալ հով ճաներով մուփկա չալելեն բո՜նգլ, բո՜նգլ սաղ մահալան շամաթայով կեշտա: Էրվընցածեն բելնի էր, որ պաբան գնած իդա մաշինը, ձեռքը տուված էր, իրեն քրտինքով չէր:

- Աղիվուկը ի՞նչ է որ դըհա: Դուն մեմը անօրվանը թող լըսեիր, կոյա մեքատը մեռելի վրա գովասանք կաներ: Իդապես ճանով կանչելեն անցավ մեքատ մաշին: Դուն աղիվուկը չլսեցի՞ր դա,- կասե դիրացինըս:

- Հաբա ինա էտեվեն մուխ էլլած տոռուբաներեն կրակները ճապտոլեն, բո՜ռ, բո՜ռ ճաներ հանելեն, անկաձներըդ խլացունելեն գնացածը ի՞նչ է յա: Անցած քենը, սաղ մահալան լեղաբադառ կըլա:

Արշակ բարեկամըս կըպատմե.

- Անօրը ինձի տոկ վարգից ճո,- կասե:

- Տոկ վարգից նը, ինչե՞ս ապատեցարա-, կըհարցունում դարա:

- Սա, ճո, տունին մեչը նստած տեղըս՝ մեկ կընգոտի վերցավ, ան մեմը լըսել, տեսնել պետք էր: Սաղ վրաս դող լցվեցավ, ոտքերըս դողալու բաշլայեցին, տունին ջամերը սաղ դողացին: Վախեցածես տոկ վարկածի պես բան էղա: Ի՞նչ կա, դուսը ստոլբա ժրչըլվեցավ ինչ է,- կասիմ ինքըս ինձի, դեպի դուս կըվազիմ: Էլլա դուսը ի՞նչ կընայիս՝ մեքատ դոյախլըյ «վոլգա», մեչը մեքատ պացան նստած՝ իդա ռադիոն էղած ուժով, հով ճանով բան ապուլ տուված, կայնած մաշդու ջանփա կընայե: Էնջամըս քանի չեշիտով կամոթիմ: Իդավուկը մուփկա կըլա, հա ճո՞: Իդայե շտե սաշինըխվան մեկ քանիհատ յաշերուն պարապունքը: Շուն ջրելեն էտեվէտեվի կըմանգան շտե:

Չիտիմ ինչի՞ իդապես անքաղաքավարութին անելու իրավունք կանին դացա ծնողները:

Անցած օր իդա ջուր ծախված տեղեն ջուր գնելու գնացիլ էի: Իդա սելդին մեքադ յաշ տղայա ինձի պես ջուրի էկավ:

- Տղաս, ինձի ալ յարդմ կանի՞ս սա ջուրիս բալոնը մաշինըս դնելու,- հարցուցի:

- Էյ պաբի, չիս ըլա նը դանելու, ինչի՞ էկիլ իս ալ սա տեղը, թող չիքայիր դա,- ասաց: Վերչն ալ՝ «ժամանակ չիքա»,- ասաց, ինքն ալ դրից իրեն բալոնը օնուփին վրան, գնաց:

Ես իհարկե դարա շամիշ էղած, էկած չէի: Յաշ տղա էր նը, ասի շտե, ծեր մաշդու պատիվ կուտա դեյին: Ես ալ բալոնիս կոթեն բռնեցի կամացով տարի հասցուցի, մաշինըս դրի շտե:

Ասելուս ան է, որ աղպես յաշեր ալ կան «ծերերուն պատիվ տուված»:

- Ախպար, մեչերը պատիվով յաշեր ալ շատ կան, քիչ չին: Կան յաշեր խոշոր մաշիններով գործեր կանին, չոլեր կելլին, կըվաստկին, մորերուն, հորերուն յարտմ կանին, ծերերուն պատիվ կուտան: Աղպես տղոցը ով ինչ ասելու կըլաս գովասանքեն ջոկ:

Մեկ անգամ ձեռքերըս էտեվըս մեչքիս դրած, յառեն կամացով կելլիմ: Մեմ ալ կընայիմ՝ մեքադ գոռուպավոյ ԿԱՄԱԶ քովըս կայնեցավ: Շաֆյոռը, յառին վրան դիժար էլլածըս հասկցած, կասե. «Քալե նիստ, պաբի, տանիմ տուներդ»:

Կընայիմ Մադոսին տղան Արթուրն է, բալաբան գոռուպավոյ մաշինը ինձի համար քշից չախ տունըս բերից կայնեցուց: Իդա տղին ինչե՞ս գովասանքը չիս անի,- ասա հայտը:

- Ախռ աղ տղոցը մարերը, հարերն ալ պատիվով մաշդիք ին դա: Անդի ալ, աղ տղաքը խելքով-միտքով կապրին շտե և ոչ թե խուլիգանութին կանին,- ասաց դիրացիններես մեկը:

- Էյ ախռ տանձը ծառեն հեռու չըյնի, անդի աղպես է շտե էղած բանը:

Մեկ անգամ մեքատին հորը վարժատուն կըկանչ ին տղին չարութին արածին համար...

- Վաշդան, տղադ դասի ժամանակ չարութին կանե, դասը մտիկ չանի, ուրիշներուն ալ քըխանկարե,- կասե վարժպետը:

- Էհ ինչ ասելու կըլամ՝ ինձի էլիլ է կայեր տղաս ալ: Դըհա կենե իմիս առաչվան վարժպետներըս ինձի տեսնուն նը, յախաները քըթոթին,- ասաց Վաշդանը, վերչացուց ասելիքը: Հաբա ինչ պիտ ըլա իդավոր տղան, խուլիգանեն ջոկ:

- Աս մեկ ծնողիյա կենե աղպես վարժատուն կանչիլ ին: Էկիլ է վարժատունը մտիլ է (աշակերտները դասի նստած ին), տղին որ դասարանը սորվեցածը չիտե, որ դուռը ծեծե: Կըմանքա միջանցքը բոյը: Մենա կընայիս վարժպետներեն մեկը ռաստ քուքա.

- Ի՞նչ կա, Ակոպ, ի՞նչի էկածիս, որի՞ն քըփնտռիս,- կըհարցունե:

- Տղիս չարութին արածին համար կլասռուկը կանչիլ է,- ասաց:

-Տղադ ո՞ր դասարանն է:

- Չիտիմ 5-ում "Ա" է, չիտիմ 6-ում "Բ" է,- ասաց Ակոպը:

Հանա նայե շտե ինչես պաբա է: Որի՞ն լըմանելիք է իդավոր երեխան: Չիտե մինչև անգամ տղին որ դասարանը սորվածը: Անդիյա աղպես «պատիվներ» կառնունք, և խուլիգաններ կըդառնան շտե աղ ծնողներուն երեխաները: Դաստիարակութինը խիստ թուլ է աղպես ծնողներուն մեչը:

Էհ, առայժմ այսքանը բավական է մեր ծերերուս մեխդրանքներըս յաշերուն հանդեպ:

Ս. ԱՏԱՄԱՆՅԱՆ
գ. Թոփթի